Հավելված N 101
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 686-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր խորհրդատու (ծածկագիր՝ 23-32.5-Մ2-3)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության գլխավոր խորհրդատուն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության գլխավոր խորհրդատուի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր խորհրդատուներից մեկը կամ Վարչության ավագ խորհրդատուներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնել գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մշակումը և օժանդակությունը,
2. Իրականացնել խորհրդատվության համակարգի զարգացման առաջնային ուղղությունների նախանշման հետ կապված աշխատանքները,
3. Իրականացնել խորհրդատվական ծառայությունների շարունակական զարգացման համար այլ կառույցների հետ համագործակցությունը,
4. Իրականացնել խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հաջողված փորձի մասսայական տարածման հետ կապված աշխատանքները,
5. Իրականացնել խորհրդատվական ծառայությունները և դրանց որակի նկատմամբ հսկողությունը,
6. Իրականացնել այլ երկրների, ինչպես նաև գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների հետ գիտության բնագավառում համագործակցությունը,
7. Իրականացնել ագրարային ոլորտի մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի մոնիթորիգ,
8. Իրականացնել գյուղատնտեսության բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշների հավաքագրումը, ամփոփումը, մշակումը,
9. Իրականացնել գյուղատնտեսական ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի հետ

կապված աշխատանքները,

10. Իրականացնել գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունը՝ փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների կազմակերպմամբ գյուղացիական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով:

Իրավունքները՝

• Ներկայացնել գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մշակման և օժանդակության, խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների, գյուղատնտեսական ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի, ինչպես նաև հաջողված փորձի մասսայական տարածման իրականացման, խորհրդատվության համակարգի զարգացման առաջնային ուղղությունների նախանշման հետ կապված առաջարկություններ,

• Ուսումնասիրել ագրարային ոլորտի մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի մոնիթորինգի հետ կապված աշխատանքները,

• Մշակել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշների անհրաժեշտ տվյալները, հավաքագրված նյութերը,

• Նախապատրաստել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար հարցաթերթեր, ձևաթղթեր և տեղեկանքներ,

• Ստանալ տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների և գյուղական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների հետ առաջարկություններ, կարծիքներ համագործակցության շրջանակներում,

• Գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունը կազմակերպելու համար ուսումնասիրել առաջարկությունները փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների կազմակերպմամբ գյուղացիական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով:

Պարտականությունները՝

• Ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման, խորհրդատվության համակարգի զարգացման առաջնային ուղղությունների, ագրարային ոլորտի մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի մոնիթորինգի վերաբերյալ,

• Ուսումնասիրել խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հաջողված փորձի մասսայական տարածման իրականացման հետ կապված աշխատանքները,

• Ստանալ առաջարկություններ և տեղեկատվություն խորհրդատվական ծառայություններն իրականացնելու համար,

• Մշակել և ամփոփել գյուղատնտեսության բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշները, ինպպես նաև գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների վերաբերյալ տվյալները ու տեղեկությունները,

• Գյուղատնտեսական ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի հետ կապված աշխատանքների իրականացման համար ներկայացնել առաջարկություններ:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- Ծրագրերի մշակում
- Խնդրի լուծում
- Հաշվետվությունների մշակում
- Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

- Կոնֆլիկտների կառավարում
- Հասարակության հետ կապերի ապահովում
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
- Ծառայությունների մատուցում
- Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
- Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում

համապատասխան մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: